ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե-2449

«25» մարտի 2022թ.

«Սմարթլայն» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ՂԱՐԻԲՅԱՆԻՆ,
«Յասոն» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ,
«Մայ Մարկետ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ս. ԵՍԱՅԱՆԻՆ,
«ԻՆՖինիտի Գրուպ-1» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԵՐԻՋԱՆՅԱՆԻՆ,
«Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԻՆ,
ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ Ա/Ձ-ԻՆ,
«ԷՆԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Է. ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/06» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. մարտի 14-ի որոշմամբ 5-րդ, 18-րդ, 25-րդ և 48-րդ չափաբաժինների մասով «Սմարթլայն» ՍՊԸ-ն, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Յասոն» ՍՊԸ-ն, 12-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 21-րդ, 28-րդ և 46-րդ չափաբաժինների մասով «Մայ Մարկետ» ՍՊԸ-ն, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով «ԻՆՖինիտի Գրուպ-1» ՍՊԸ-ն, 27-րդ, 29-րդ և 30-րդ չափաբաժինների մասով «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ն, 33-րդ չափաբաժնի մասով ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ Ա/Ձ-ն և 38-րդ և 44-րդ չափաբաժինների մասով «ԷՆԱ» ՍՊԸ-ն հայտարարվել են ընթացակարգի ընտրված մասնակիցներ:

Ընթացակարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 12-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 33-րդ, 38-րդ, 44-րդ, 46-րդ և 48-րդ չափաբաժինների մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2022թ. մարտի 24-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացվում է, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկվում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/06» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/06» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ /+37410/ 511-792, 511-788